

ՊԱՅՄԱՆՔ

Յարեկան գին և Պայույն 40 ՄԶԸ.
Գաւառաց 2 Լիւր
Վեցամս. և Պայույն 5 ՄԶԸ.
Գաւառաց 1 Լիւր
Օտար երկրներու 50 Ֆր.
Գանձարան տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուշ է: աւելի անգամներու
համար Գաւառ սակարկութիւն կը-
լայ:
Իւրաքանչիւր թիւ 40 փարս արծ:




ԼՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Գորն գնացած իրադրաց Էստրու-
ժախքը խորագրութեան վրայ է:
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ և ինչ գրութիւն խորագրի
— Տնօրէնին պիտի ուղղուի, զայա-
թիւս Սանտրքըլար շատուկսի թիւ
198, Եօրօ խան: Կապի գրասեն-
եակը:
Հանրու ծառքը ինքնուրուի նա-
մակ չընդունուի:
Հապուած նամակը խորագրած, և
ետ չեն արուիր:



ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 3 ՅՈՒՆԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Եւրոպայէն եկած հեռագրերուն
տուած ամենէն կարեւոր լուրն է Ռու-
սական զօրաց Արեւելեան թուակէն
և Պոլսոյ վերաբերեալ բոլորովին մեկնիլը,
զոր Լորտ Սալիսպըրի ևս ծանոց անց-
եալ օր Լորտերուն խորհրդարանին:
Փիլիպպէի մէջ գտնուած վերջին Ռու-
սական զօրքը մեկնեցաւ, գաւառին
վերադարձնելուն, կրկին և ժողո-
ւորքեան կողմէ մինչև երկու շաբաթ
կայարանը ճանաչու գրուելով: Այսպէս
Պէրլինի գաղափարին մէկ կարեւոր
յօդուածը կատարելագոյն կը դործադ-
րի: Ետեւորը կը կարծէին թէ Ռու-
սիա պատճառ մը պիտի գտնէր իւր
զօրքն Եւրոպական թուրքիայէն դուրս
չհանելու, և այս կասկածը մինչև
իսկ տէրութեանց նախարարները կը
վարանեցնէր: Բանակցութիւններ ե-
ղան, գէպքեր ծագեցան, որք կըր-
նային Ռուսիոյ առիթ տալ իւր զօ-
րաց մեկնելն ուղարկելու, որոյ հա-
մար իւր գիւտնադիտութիւնն առա-
ջարկներ կընէր, բայց տէրութիւն-
ներն հաստատ կեցան գաղափարին
դործադրութիւնը պահանջելու մա-
սին, և Ռուսիա սահմանեալ պայմա-
նաժաման մէջ մեկնելու պարտաւո-
րեցաւ: Այս բանը կրնայ յաջողու-
թիւն մը համարուիլ արեւմտեան գի-
ւտնադիտութեան, և խաղաղութիւն
նը բաւական ամրացնել: Բայց արդ-
եօք վրդավան նշանները բոլորովին
վերջած են: Ասոր վրայ տակաւին
կարելի չէ ստոյգ ապահովութիւն ու-
նենալ: Դաշնագրին մէկ կարեւոր տը-
րամագրութիւնը մեծ խնդիր մը կը
թուուի: 15 թ. յօդուածը կընէ. «Վե-
հախառ Սուլթանն իրաւունք պիտի
ունենայ գաւառին (Արեւելեան թու-
ակէի) ցամաքային և ծովային սահ-
մանաց պաշտպանութիւնը հոգալ,
նոյն սահմանաց վրայ ամրութիւններ
շինելով և զօրք պահելով»: 14 թ. յո-
դուածին համաձայն Արեւելեան
թուակէի սահմանները Պալքաններէն
կանցնին, զորս մասնաւոր Եւրոպա-
կան միջազգային յանձնախումբ մը
գծելու զբաղած էր, և կարծեմք թէ
իւր պաշտօնին գլխաւոր մասը կա-
տարած է այժմ: Հետեւեալ Ռուսաց
մեկնելէն և սահմանին դժուելէն ե-
տե 15 թ. յօդուածին դործադրու-
թեան կարգը կրնայ գալ: Բայց Ա-
րեւելեան թուակէի Պոլսոյ վերաբերեալ
տակարարութիւնը և Օսմանեան զօրաց
Պալքանները դրաւերուն դէմ դընե-
լու կը պատրաստուէին: Կրկին թէ
կրնայ նոր արեւելահեղութիւններ պա-
տահիլ և թէ զինուոր գէտ պիտի դը-
նեն այս գրաւման: Բայց այս խօսքե-
րը կարեւորութիւն չեն կրնար դըռ-

նել գաղափարն ստորագրող տէրու-
թեանց աչքին առջև, որք խնդրոյն
քաղաքական մասը կրնային ուշադ-
րութեան առնուիլ, և ոչ Պոլսոյ քաղա-
քական ուղղութեանը: Դաշնագր-
ին 16 թ. յօդուածը կը արամագրէ
գաւառի թէ ընդհանուր կառավա-
րին իրաւունք պիտի ունենայ Օս-
մանեան զօրքն օգնութեան կոչելու
երբ գաւառին (Արեւելեան թուակէի)
ներքին կամ արտաքին անդորրու-
թեան սպառնալիք մը լինի: «
Անցեալները Գալլոփոսի Հրեայ
գաղութականաց վերադարձին առթիւ
Պոլսոյ վերաբերեալ խառնութիւն հանած
և դանդաղ չէին ընդունած: Հրեայ-
ները կընէին թէ մաղաղաբեր դերման
Պոլսոյ քաղաքը Զեքէն, թէպէտե Ալե-
քսանդրիոյ վրեժը քննիչ մասնախումբ
ընդ կը տեղեկագրէ եղբր թէ քանի մը
Պոլսոյ տղայք միայն Հրեայ քաղ-
նետած են: Բայց Արեւելահեղութեան
և մաղաղաբեր Արեւելեան թուակէ-
ի բնիկ խառն գաղութականներ իրենց
տեղերը կը զրկուին եղբր: Եթէ Պոլս-
ոյ վերաբերեալ Գալլոփոսի Հրեայ ըրած ըն-
դունելութիւնն անոնց ալ ընեն, կամ
եթէ ինչպէս խիստ հաւանական է՝
աստիճան մ'աւելի դիմադրեան անոնց
վերադարձին, եթէ խառններն ալ
իրենք զիրենք պաշտպանեն իրենց
գիտցած եղանակաւ, արդեօք գա-
ւառին անդորրութեան սպառնալիք
չպիտի լինի: Բայց ընդհանուր կա-
ռավարիչն Օսմանեան զօրքն այն ա-
տեն օգնութեան պիտի կանչէ: Ա-
լեքսանդրիոյ տակաւին մաղաղաբեր
քէս չմեկնած, Փիլիպպէի Մարկիզա ա-
նուն Պոլսոյ քաղաքը թղթակցին
հետ խօսակցելով իւր ծրագրերը ծա-
նուցած էր, որ Պոլսոյ քաղաքին
զոյցման կատարելագոյն համաձայն
էր: Ալեքս. փաշան ըսած էր թէ ինք
Պոլսոյ քաղաքին զօրքը պիտի պահ-
պանէ ներքին անդորրութիւնն, և ե-
թէ չյաջողի՝ հրաժարական պիտի
տայ: Բայց եթէ վերադարձող խառն
գաղութականաց և Պոլսոյ քաղաքի
կառններ պատահին, եթէ Ալեքս. փա-
շան Օսմանեան զօրք չկանչէ, միթէ
Բ. Դուռը չպիտի՞ պահանջէ որ իւր
զօրքը հոն մտնէ խառնները պաշտ-
պանելու և բարեկարգութիւնը պահ-
պանելու համար: Արդէն Ալեքս. փա-
շային բռնած ծայրայեղ Պոլսոյ քաղաքին
աշխարհապարտութիւնն ոչ միայն Բ.
Դուռն՝ այլ և Փիլիպպէի Եւրոպական
միջազգային յանձնախումբին կամ
գոնէ անոր անդամաց անոնց գէտ-
հոյ թեան առաջնայ կողմէ էր: Կր-
տէր թէ Բ. Դուռն Ալեքս. փաշան
պաշտօնանկ ընել առաջարկէր է,
քանի Արեւելեան թուակէի ընդհա-
նուր կառավարիչն, ըստ գաղափար-
ութեան, հինգ տարուան համար կան-
ւանի, և Բ. Դուռն զայն պաշտօնանկ
ընելու համար տեղութեանց հաւա-

նութիւնը պիտի առնուի: Այս մասին
տէրութեանց սրտումը դեռ յայտնի
չէ: Արդ՝ թէպէտ Ռուսական զօրաց
մեկնելուն առթիւ կրնայ խաղաղու-
թիւնն ամրացած համարուիլ, բայց
այսու ամենայնիւ Արեւելեան թուակէի
մէջ շատ մը կրակոտ խնդիրներ կը
յուզուին, որոց ամենուն ալ խաղա-
ղութեամբ լուծուիլը դժուար է յան-
գըղնութիւն է: Իսկ անպատճառ
վրդովում և նոր արեւելահեղութիւն
նախատեսելն ալ յուսեալութիւն է:
Այն խնդիրներէն մին՝ որ միաբերը կը
չվիժէ, Արեւելեան թուակէի մէջ ծագ-
ման կասկած առող գէտարութիւն
ներն են, որոց կարգադրութիւնը
գիւտնադիտութեան մեծ զբաղում
պիտի տայ:
Սակայն ներկայ գէտարութեանց
անմիջական է Հեղինակին խնդիրն:
Ըստ գաղափարութեան՝ եթէ Յուսա-
տան և Բ. Դուռն չկրնան համաձայ-
նիլ, Եւրոպական տէրութիւնը պիտի
միջնորդեն: Բայց ահա Ռուսիայի հե-
ռագիրը մը կընէ թէ Բ. Դուռն առ-
թիւն մը միջնորդութիւնը չընդու-
նիր: Այս լուրը գէտարահաւատա-
լի է մեզ: Կ. Պոլսոյ գէտպանախորհրդ-
ընէ և Լոնտոնի գաղափարին (Բրոքս-
քոյ) մերժութեան յիշատակը տակա-
ւին շատ նոր է, որպէս զի Բ. Դուռն
գաւառեալ զուտ մերժողական աշխար-
հապարտութիւն մը բռնէ: Սյուս ա-
մենայնիւ խնդրել ծանր է: մէկ կող-
մէն Հեղինակը պահանջումները, միւս
կողմէն Արեւելահեղութեան գիւտնադրու-
թիւնը Բ. Դուռն գէտարարին կայու-
թեան մը մէջ կը գնեն: Գործի տե-
ղութիւնը լրագրելը խիստ առաջ եր-
թալով ծանուցած էր թէ Դաղըիս
Այապահայիները Դաղըիսական զօրք
զոյցել կառաւարկէ, բայց այս լուրն
անհիմն էր և այդ պատճառաւ յիշ-
եալ թերթը մէկ ամիս գաղափարմը
պատժուեցաւ Բ. Դուռնէ:
Ռուսիոյ ոչ ուսող ծանր խնդիր մ'ալ
Աւստրիոյ կողմէն Նոյի-Պաղար զօրք
զրկելու արամագրութիւնն է, որոյ
գործադրութիւնը կը պահանջէր Ու-
լըստրիա: Եւրոպական թերթերէն
ոմանք կը խորհրդածեն թէ վիէննայի
արքունիքը մեծ գաղափարներ ունի:
Սկիանիկ կրնայ կեդրոնական Եւրո-
պայի համար նաւահանգիստ և վա-
ճառականութեան մեծ կեդրոն մը
լինել, ինչպէս է Մարսիլիա արեւմտե-
ան Եւրոպայի համար: Սկիանիկէն
Միլթոսիոյ չինուած երկաթուղին
Աւստրո-Հունգարիոյ երկաթուղեաց
հետ միացնելով, վիէննայի և Պէր-
լինի վրային Պալմիրիկի ծովագիւղը
Միլթոսիոյ հետ հաղորդակցու-
թիւն կրնայ ունենալ: Սկիանիկ Սուե-
իշի ջրանցքին և Եգիպտոսի ճիւղ-
գիւղան է: Իւր նաւահանգիստը գոր-
ծունայ տէրանց ձեռքը կրնայ ամ-
րութիւններով պաշտպանուիլ թշնա-

մի նաւատորմերու մուտքը արգելել:
Եւ համար իւր ծովային վաճառքի
համարանոցներ կրնան շինուիլ, և
իւր Պոլսոյ մէջ Յիւններն ու Հրեայ-
ները կրնան միջիլ: վիէննայի ար-
քունեաց այս մեծ գաղափարին դոր-
ծադրութիւնն Աւստրիոյ կոմիտէին յանձ-
նուած է եղեր: Ռուսիոյ Նոյի-Պա-
ղարի առ կախ մնացեալ խնդիրն ալ
կնճառող դործ մ'է, և իրաց վիճակին
նայելով՝ վաղը լրագրել իրաւամբ
կըսէ թէ գէտադարար թուրքիա չը
պիտի կրնայ առկա խնդիրներէ և
գէտարութիւններէ ազատիլ:
Անգլիական Ոքսֆորդի քաղաքին
որ Էստրադուրի մէջ կը հրատարակի
և Անգլիոյ առաջին կարգի ազատա-
կան թերթերէն մին է, Լորտերուն
ժողովին մէջ Հայկական խնդրոյ վը-
րայ եղած վիճաբանութեան առթիւ
հետեւեալ նշանաւոր յօդուածն հը-
րատարակած է:
«Հայոց ենթակայ եղած յոռի
կառավարութեան վրայ երէկ գիշեր
Լորտերուն ժողովին մէջ տեղի ունե-
ցած վիճաբանութիւնն՝ Անգլիական
կառավարութեան Արեւելեան աշխար-
հապարտութեան իրական հանդաման-
քը գիտնալու վախճաններուն հա-
մար հրահանգով լի է: Ժամանակ
առ ժամանակ երկրին (Անգլիոյ) ա-
պահովութիւնն արուած էր թէ նա-
խարարը թուրքիոյ մէջ հպատակ յե-
ղերուն վիճակը բարւոյնէլէն աւելի մեծ
փափար չունենէին, և երբ փոքր-Սկիայ
վերաբերեալ պայմանագրութիւնն
յայտնուեցաւ, կրտսեր թէ հարկաւ-
որ գատուած բարենորոգմանց դոր-
ծադրութեանը համար իրական ա-
պահովութիւն մ'է:
Եթէ այն ժամանակ նախարարաց
ըրած բանախօսութիւններն և հրա-
տարակած գրութիւններն աչքէ ան-
ցունեմք, պիտի տեսնեմք որ անոնք
այդ պայմանագրութիւնը թուրքիան
բարեկարգելու համար Անգլիական
կառավարութեան ունեցած փափա-
քանայ իրեն ազադող մը գործածե-
ցին, և միանգամայն իրեն փաստ մը
թէ արդի նախարարութիւնն այդ-
բարենորոգումներն ապահովելու հա-
մար ասկէ առջի ժամանակաց բոլոր
նախարարութիւններէն աւելի աշխա-
տութիւն յանձն կառնուի: Լորտ
Գալաթիոյ երէկ գիշեր հաստատեց
թէ ոչ բարենորոգում եղած էր և ոչ
ալ բարենորոգման համար ջանք, և
թէ գէտադը Հայոց վիճակին առաջ-
ւնէն աւելի փայտացած էր: Հայք
պարզապէս կենաց և ընչից ապահու-
վութիւն կը խնդրեն և կըսեն թէ
մինչև որ Հայաստանի գաւառին հա-
մար քրիստոնեայ կառավարիչ մը չան-
ւանի, այս արդիւնքը ձեռք բերուե-
լիք չունի: Լորտ Սալիսպըրի այժմ էնչ

պատասխան կուտայ այս դանդաղա-
նայ : Դրան այն խօսքը կը կրկնէ թէ
բարենորոգում անհնար է առանց դե-
բամի , և դրամ չկայ : Կը փաստա-
բանէ թէ բոլոր զեղծմանց մէկէն 'ի
մէկ բարեօրոշմն յուսալ անտեղի է :
բայց կտրող է ըսելու թէ բարե-
նորոգման համար որ և է ջանք մ'ե-
ղած է : Թուրքիոյ կաղնալուծութեան
սարսափելի վիճակը կը յիշէ իբրև
պատճառ բարենորոգմանց մինչեւ
յարդ չգործարարուելուն , չգիտնա-
լու անշուշտ որ այդ կաղնալուծու-
թիւնը բարենորոգմանց չգործար-
արուելուն արդիւնքն է : Լորտ Պի.քօն-
ֆիլսոփն և իւր կողմանէ հաղար ան-
գամ տրուած այն ապահովիչ խօս-
քը կը յիշէ թէ ոչ մէկ իշխան արդի
Սուլթանին չափ փափաքող էր բա-
րենորոգումներ ընելու : բայց Լորտ
Սալիսպըրի բարեկարգութեան ճան-
քուն մէջ Սուլթանին ըրած մէկ ամե-
նայիտը քայլն յիշելու անկարող է :
Արևմտեան տէրութեանց Դրան խոր-
հուրդ տալ սկսելէն 'ի վեր Սուլթանը
միշտ պատրաստ կը գտնուէին խոս-
տումներ ընելու թէ կառավարական
դրուածքներ պիտի բարեօրէնէր և զեղ-
ծումները պիտի անհետանային : Բայց
գրեթէ խոստում տալէ զատ ուրիշ
բան մ'ըրած չեն : Բացորոշ յայտա-
բարութիւններ եղած էին , բայց ա-
մենափոքր բարենորոգում մը գոր-
ծագործած չէր : Ինչպէս որ մինչև
ցարդ եղած է , այժմ ալ նոյնպէս է ,
և կերեկ թէ մինչև վերջն այնպէս
պիտի լինի , քանի որ իշխանութիւնը
թուրքին ձեռքը գտնուի : Սուլթանը
խել մը խոստումներ ըրած էր , և
այժմ Լորտ Սալիսպըրի ալ խել մը
պատճառներ մէջ կը բերէ այդ խոստ-
մանց անգործարարութիւնն արդարա-
մանց Սալիսպըրի ոչ ոք բաւական ան-
միտութիւն ունեցած էր պահանջելու
որ դարձաւ չարիքները մէկէն 'ի
մէկ անհետանան հրաշալի կերպիւ :
Բայց ամեն մարդ կ'սպասէր որ բա-
րենորոգմանց սկզբնաւորութեան
ջանք մը լինի , իսկ այդպիսի սկզբնա-
ւորութեան մը նշանն անգամ չկայ :
Միւսընդէն հետեւեալ լուրը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Լոնտոն 16 յուլիս .
Արևելեան Ռուսիոյ Եւրոպական յանձ-
նախմբին մէջ վերջերս Անգլիական ա-
ռաջին պատուիրակի պաշտօնը վարող
Սեր Տերմանըն Ուոլֆ , որ Անգլիա վե-
րադարձած է , իւր Քրոյսթ-Չըրչի ընտ-
րողաց ուղղելու բանախօսութեան մը մէջ
բացատրեց թէ Փիլիպէի միջազգային
տակն էր Ռուսիոյ դէմ պատուար մը քա-
շել , Արևելեան Ռուսիոյի ազատութիւնն
ապահովել , և վերջապէս Օսմանեան կա-
ռավարութիւնն Եւրոպական Թուրքիոյ
միւս գաւառաց ալ ինքնօրինութիւն տա-
լու համոզել :

Այս առաջարկը հասած հետեւեալ
Սոֆիա 18 յուլիս .
Ռազկրատի* կողմը Մահմետականը
ապստամբեցան և անկարգութիւն պատ-
ճառեցին : Ապստամբաց քանի մը խմբեր
Արևելեան Ռուսիոյ մոտան : — Կը կարծուի
որ այս ապստամբութեան պատճառը
Պուլխարաց ծայրայեղութիւններն են :

Լոնտոն 16 յուլիս .

Օսմ. Քանս .	14 7/8
Փոթի .	1865 15 1/2
»	1869 14 5/8
»	1871 56
»	1872 24 1/2
»	1873 13 5/8

* Վառնայի և Ռուսոմուրի միջև կը
գտնուի :

» Կղ իսլու . —
Անգլ. Քանս . 97 15/16

Օսմ. Քանս .	12. 7 1/2
Պաղդ. Քանս .	50 0 82.72 1 1/2
»	» 34.85
»	» 50 0 113.12 1 1/2

ՆԵՐՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ
Թէհրանի Օսմանեան դեսպան
Ֆախրի պէյին Պալայի աստիճան տըր-
ւեցաւ :

Հելլենական խնդրոյն վրայ Կ. Պալայ
մէջ բանակցութեան համար Օսմանե-
ան կառավարութեան կողմանէ կար-
գեալ պատուիրակաց անունները տա-
կաւին պաշտօնապէս չժանուցուե-
ցան . բայց վաղը իւր այս առա-
ւօտեան թուով 'ի լրոյ կը ծանուցանէ
թէ ֆարիզի նախորդ դեսպան Արիֆի
փաշան և հասարակաց կրթութեան
նախարար Միւնիֆ Էֆենտին և ֆե-
րիք Նէճիպ փաշան պատուիրակ կար-
գուած են :

Տակէս Էֆենտի արտաքին գոր-
ծոց նախարարութեան կողմանէ պա-
տուիրակ կարգեցաւ . Գարսառաղի
սահմանագլուխը գծելու պաշտօն ու-
նեցող միջազգային յանձնախմբին ,
և ուրբաթ օրն Շրօտրա պիտի եր-
թայ :

Օսմանեան արշիպիլադոսի կըղղ-
եաց դատարաններուն վերատեսուչ
Յ. Կոստանդ փաշան և Քիոսի (Սա-
գըղ) եղեռնադատ ատենին նախա-
գահ թողաթեան Գասպար Էֆեն-
տին այսօր կը մեկնին մայրաքաղա-
քէս 'ի Քիոս :

Մայրաքաղաքին Յունական կրա-
գիրները կը ծանուցանեն թէ Օսմանե-
ան կառավարութեան Եպիքոսի մէջ
ունեցած հոգային սեփականութիւն-
ները սեղանաւորաց խմբակի մը վա-
ճառուեր են , որոց գլխաւորն են Խը-
րիսթաքի Էֆենտի Զօղրաֆօս և Պ.
Բամօնաս :

Փրիզընտի Ալպանիական միու-
թեան գլուխները Կ. Պոլիս գալու
համար ճանրայ ելեր են :

Վառնայէն առնուած լուրեր կը
ծանուցանեն թէ անցեալ շաբթու
Թրեօպոլի մէջ մեծ հրդեհ ծագեր և
100ի չափ տուն և նոյնչափ խանութ
և մթերանոց հրդեհ արակ եղեր են :
Հետեւեալ օրը Պուլխարիոյ իշխանն
հրկիզեալ տեղերն այցելութիւն ըրեր ,
և հրդեհէն վնասուողներուն 200,000
ֆրանք նպաստ խոստացեր է : Աղդ-
ժողովոյ անգամը ալ իրենց մէջէն
30,000 ֆրանք հանգանակեր են :

Լէվանթ Հէրալտ կը ծանուցանէ
թէ Չմիււնիայէն Ալտին գնացող
երկաթուղոյն դէպ 'ի ներսերն ըն-
դարձակման արտօնութիւն տուող
կայսերական հրամանագիր մ'եղած է :

Քաղաքապետութեան մէկ ազգը
կը ծանուցանէ թէ պղինձ դրամով
ոսկւոյն դինը վերստին բարձրանա-
լուն պատճառաւ , հացին գինն 3 ու-
կէս դրէն 3 դր 30 փարայի ելած է
այսօրուէն :

Մէմօրիալ Տիւրքմանիք լրագիրը
կը ծանուցանէ թէ Լորտ Սալիսպըրի
Մահմետ Նէտիմ փաշային Կ. Պոլիս
վերադառնալուն համար դժգոհու-
թիւն յայտներ է Սեր Հ. Լէյարտի
և յանձնարարներ է անոր հասկցնել
Սուլթանին որ եթէ Մահմետ Նէտիմ

փաշային վերադարձն Անգլիական
շահագ ընդունին հակառակ աշ-
խարհավարութեան մը ձեռք առ-
նուիլը կը նշանակէ , Անգլիական կա-
ռավարութեան Հելլենական խնդ-
րոյն մէջ Բ. Դուռը պաշտպանելէ ետ
պիտի կենայ , և երկուստեան խնդրոյն
լուծմանը դարձ , Անգլիական պար-
տաւարաց դատը ձեռք պիտի առ-
նու ազդու կերպիւ ' Կ. Պոլսոյ մաք-
րատանց վրայ արգելք դնելով : Միւս
կողմէն Սեր Հ. Լէյարտ յայտներ է
որ ինք ալ հրաժարական պիտի տայ
եթէ Մահմետ Նէտիմ փաշան իշխա-
նութեան անցին և խայրէտուն փա-
շան պաշտօնակ լինի :

Կարնոյ Էնվարի Շարքիէ լրագի-
րը կը ծանուցանէ թէ Ռուսիոյ Թուր-
ւած գաւառներէն Օսմանեան հողը
գաղթել ուղղ խլամ ընտանեաց
թիւը 10,500 կը հաշուի : Ասոնցմէ 6
հազար ընտանիք Կարնոյ նահանգին
մէջ պիտի կրնան հաստատուիլ , իսկ
մնացածները չընկալ նահանգաց մէջ :

Աճարայի գաւառին զինուորական
հրամանատար Ստեփանով հաղարա-
պետն յիշեալ գաւառին մահմետա-
կան բնակչաց թուրքիա գաղթելուն
վրայ հետեւեալ տեղեկութիւններն
հաղորդած է Ռուսական լրագրի մը .

« Գաւառին երեք մասերուն մէջ ,
որք վերին և Ստորին Աճարա և Մա-
ղախէլի կը կոչուին , 6000էն աւելի
տուն չկար , թուրքական վարչութե-
ան մեղ հաղորդուած պաշտօնական
հաշուոց համեմատ : վերին Աճարայի
բնակիչներէն և ոչ մէկ ընտանիք չէ
գաղթած . միայն երկու ընտանիք
արտօնութիւն ստացան գաղթելու :
Ստորին Աճարայի և Մաղախէլի բը-
նակիչներէն 800 ընտանիք գաղթելու
արտօնութիւն ստացան : Ասոնցմէ մի
քանին արդէն Ռուսիա վերադարձան :
Տակաւին յայտնի չէ թէ որչափ ըն-
տանիք իրենց տրուած արտօնութե-
ան օգուտ պիտի քաղեն : »

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՈՇԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ	
Երկ կ իրիկուն դոցուեցաւ	12,33
Այս առաւօտ բացուեցաւ	12,33
Կէս օրին	12,33
Բումբի երկաթուղի	Քր. 45,75
Թոյլ աղբամ	Քր. 1000
Մէճիտի տարբերութիւն	6 12
Նիւյնոյ	14 30
Մէճիտի	15 30
Պղինձ	291

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Մայրաքաղաքին Հայ կրագրաց
մին երեքշաբթի օրն « Գ. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. »
առաւ լուր տուած էր թէ « Սեր Հէն-
գրի Լէյարտ մեծ սրտնեղութիւն ըզ-
գացեր է անցեալ ուրբաթ առուր
մեր Աղդ. Ժողովոյ նստին մէջ Պալմ-
« Տի մարքիդին , և ֆարնալովն , Համ-
« մօնտ , Մօրլէ և Կրանվիլ Լորտերուն
« տրուած շնորհակալութեան քուէին
« դէմ , և իւր այս սրտնեղութիւնն
« անուղղակի կերպիւ մը Ս. Պատրի-
« արքին ալ զնկուցանել տուեր է : »

Այս լուրը նոյն իսկ Ս. Պատրի-
արքէն ստուգելով կրնամք բացար-
ձակաբար յայտարարել թէ հիմնովին
սուտ է :

Պատրիարքական ֆոխանորդ Իդ-
միրեան Գեր. Մատթէոս Սրբազանի
նախագահութեամբ երէկ խառն ժո-
ղով գումարուելով հետեւեալ որո-
շումներն ըրաւ .

Գեր. Նար-Պէյ խորէն սրբազան
Ռուսանիոյ և Պուլխարիոյ այցելու
հովիւ կարգեցաւ .

Արթ. Իդնատիոս վ. Շիշմեան
այցելու հովիւ կարգեցաւ . Գերանի-
Արթ. Տ. Տաճատ քահանայ Բա-
բերդիի Առաջնորդ. Տեղ. Բաբերդի-
և Արթ. Տ. Ներսէս վ. Արմաշու
Առաջնորդ. Տեղ. Տիգրանակերտի :

Կը լսեմք թէ Ռուսոմեական խոր-
հրդոյ անգամ չաղըճեան Էֆենտին
երէկ խաղիւղ երթալով վարժա-
րաններն աչքէ անցուցեր և Ներսէս
եան վարժարանի տեղափոխութեան
խնդրին անաշուապէս քննել է :

... Խմբագիր .

Երէկ Արմաշու վանքին մնացորդ-
միաբաններէն Մամբրէ վարդապետ
մ'իր հետ բերած շատ մ'արծաթե-
ղէն , անաքսիոսայ և բրդեայ մանած-
ներ , կտաններ և ուրիշ բաներ շուկան
Պէղէսթէնին մէջ ծախու հանած ատեն ,
քանի մը Հայ երիտասարդք կը տես-
նեն , և ապօրինաւորութիւն մը նըշ-
մարելով այս բանին մէջ , անմիջապէս
կարգելու փաճառքը , և թէ ' իրե-
ղէն և թէ վաճառական վարդապե-
տը կ'իջեցունեն 'ի Պատրիարքարան :

Բարեբաղդարար Դատաստանա-
կան խորհրդոյ օրն ըլլալով , Առնետա-
պետ Ն. Շահպագեան Էֆենտին գոր-
ծը թոյլ չըճեն , և Մամբրէ վար-
դապետը կը հարցաքննէ , որ կը պա-
տասխանէ թէ ինքը վանհայր Խո-
րէն եպիսկոպոսին հրամանաւ բերած
է զանոնք ծախելու . սակայն երբ կը
հարցուի թէ վանհայրը Պատրիար-
քարան ծանուցած է այս խնդիրն ,
որ ըստ Սահմանադրութեան վանքի
մը գոյքն ինքնին ծախելու արտօ-
նութիւն չունի , Մամբրէ վարդա-
պետն այնպիսի ծանուցագիր մը չու-
նենալը կը խոստովանի , և գոյքերն
'ի պահեստի կը դրուին Պատրիար-
քարան մէջ :

Մեք տարակոյս չունիմք թէ
Մամբրէ վարդապետը գողունի կեր-
պիւ բերած չէ այդ վաճառքն 'ի Պո-
լիս , այլ վանհայր Ալըգեան Խորէն
եպիսկոպոսին յանձնարարութեամբ ,
որ ազատ համարձակ վանքը վեր-
ջին աստիճանի քայքայման հասցու-
նելու կ'աշխատի , բայց այս անգամ
կերեկ թէ սխալեր է ' Մամբրէ վար-
դապետի պէս անգործունեայ անձի
մը ձեռքը վանքին գոյքերն ' այն է
բարեպաշտից նուէրներն 'ի վաճառ-
հանելով , եթէ ուրիշ անգամներու
պէս իւր հօրէկ և « Գ. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. »
կանին ' Կէյվէլի Ներսէս վարդապե-
տին միջոցաւ ընէր , անշուշտ պիտի
յաջողէր . . . :

Արմաշու վանքը վերանորոգի վան-
քին հաւատարեցնելու խոստումներ
ընող այս միաբանները , թողալա-
ւոր աշակերտաց վարժարանը փակե-
ցին ' Խորէն չենք կրնար ընել ըսե-
լով , ժառանգաւոր աշակերտները
ցրուեցին ' Խորէն չենք կրնար ընել ը-
սելով , նորատի և անփորձ երիտա-
սարդ վարդապետները վանքէն
դուր հանեցին ' Խորէն չունինք ըսե-
լով , վանքին ոչխարները ծախեցին ,
արծաթները ծախեցին , շերմեռանդ-
հաւատացելոց նուիրած աղամանդ-
եայ և ոսկի խաչերը , մասունքներն
և այլ թանկագին նիւթերը ծախե-
ցին առանց հաշուոյ , և տակաւին
մեծագումար պարտք ունին իւսկիւ-
տար բնակեալ սարաֆի մը , որ Խո-
րէն և Ներսէսի հետ սերտ բարե-
կամութիւն ունի : Եւ այս ամենը
մեր Պատրիարքարանն և Աղդ. վար-
չութիւնը գիտէ ու կը տեսնէ , բայց
չտեսնելու կուգայ : Մշոյ վանհայրն
իւր տեղէն հոս Պոլիս կը բերէ դա-
տելու համար , իսկ քիթին տակ կը



ԱՅՆԵՐԻ ՎԻԿՏՐԻՆԵ

Ուր որ իր մարդերուն թափելը չու-
ղեր, «Այսերի վիճակը» կոչուած մարդի
անուշահոտ ջուրէն գործածելու է.
ուրիշ ամեն տեսակ մարդի ջուրերը
կտրելու համար սր մաղ չի թափելու հա-
մար կը ծախուին, բոլորն ալ անօգուտ
են. իսկ վիճակի օգուտը միջոցաւոր
մարդերով տեսնուած է, և Պոլսոյ ու
գաւառացի սէջ օր օրի գործածող-
ներուն թիւը կաւելնայ: Անոնք որ
իրենց մարդերուն գեղեցկութիւնը
կորսնցնելու վրայ են, շուտով գոր-
ծած են աս ջուրէն որ ի վերջոյ չզղջան-
ք թափելու վրայ եղող մարդերը կը հաս-
տատեն ու կամրապնդէ, թափածնե-
րուն տեղը մաղ կը բուսցնէ երբոր
մարդերուն արմատը քնատուած է,
ու ճերմկած մարդերը անպատճառ
իր նախկին բնական գոյնին կը բերէ,
գործածելուն կերպը չի շեղուած հետն
է. կը ծախուին և Պոլսոյ Ղալաթիա
Միմաստան և Բիկերայց Ամերիկայի
Մաղաղան:

Ա. Զ. Դ.

Մինաս Զերադի գործերը՝ Պոլսոյ
գործարաններէն զատ՝ Բերայի կողմն
ալ կը ծախուին Ղալաթիա—Սարայի
դպրոցին գիմնայի Պ. Պոսէն գաղղի-
ացի գործարանէն քով, հետեւեալ գի-
մներով.

Գրական փորձեր 2 փրանք
Ազգ. Դաստիարակութիւն 1 1/2 »
Թէ ինչ շահեցանք Պէր-
լինի վեհաժողովէն 75 սնդիւմ:
Հայաստան և խալիա 1 փրանք

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԽՈՍԲ ԶԱՅՐԵՆԵԱՅ

Վաճառական Պարտքեր

Սոյն գրքովը համառոտակի կը խո-
սի Պոստոսի և Բարձր Հայոց քաղա-
քացի և գիւղօրէից, բուն, կէսկէս
և Տուփիկ Հայերու, Գրգերու, Զա-
գաներու, Թիւրքերու, Եղեղիներու
և Բաշաներու, նոցա կենդանի և
այլեւալ սովորութիւն, Արաբներու
երկրոց դաղթականութեան և այլն
վրայօք: Գին քառորդ մէծիւս

ՄՏԱՄԱՐԶՈՒԹԻՒՆ

ԲՍՏ ԲԵԼԻՍԷԻ

(Մայրենի ոճ)

ՄԱՍՆ Ա.

Դեպքերէնէն երջ և եակոյ

Օրինակը և նիւթը բերանացի և զրա-
ւոր հրահանգաց 3 էն 8 տարեկան
տղայոց համար:

Թ. Թէրեւան

Իւր տեսակին մէջ նոր բայց խիստ
կարեւոր գործ մ'է, որով մեծարդոյ
հեղինակը մեր ազգային վարժարանաց
մէջ մեծ պիտոյքը լցուցած է: Ինչ-
պէս անունն ալ կը յայտնէ, տղայոց
միտքն ինքնուրուշ մեծութեան վարժե-
ցնելու նպատակաւ շինուած գիրք
մ'է, զոր մեր ազգային դաստիարա-
կաց ու շարժութեան կը ներկայանք:
Գործը 3 մասէ կը բաղկանայ, որը
հետզհետէ պիտի հրատարակին:

Կը գտնուի ամեն Հայ գրականա-
ւաց քով և Բէրա Մ. Վէյի և Մ.
Պօսէնի գրատունները: Գին 1 փրանք:

ԽՈՐԱՎԳԻՐ—ՏՆՈՐԷՆ
Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ
ՂԱՆԱԶԱՆ ՆՈՐՈ ԽԱՆ

ՇԻՐՔԵԹԻ ԽԱՅՐԻԷԻ ՇՈՐԵՆԱԿԵՐՈՒՆ ԵՐԹԵԿԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1879 ՅՈՒԼԻՍ 1 ԿԻՐԱԿԻ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆԱՅԻ ՅՈՒԼԻՍ 31

ԲՈՍՓՈՐԷՆ ԻՋԵՆՈՂ ՇՈՐԵՆԱԿԵՐՈՒՆ

Ժամ	Երբեք ելնէ	Թիւ
40 45	Եկնիմաստայէն Մէջադ. Պէյի. Թար. Եկնի. Սթէն. 32	
11	Եկնիմաստ. Մէջադ. Պէյի. Թար. Եկնի. Սթէն. 20	
41 30	Բ. Ս. Գալաթի. Եկնիմաստ. Մէջ. Պէյի. Թար. Եկնի. 34	
42 30	Եկնիմաստ. Մէջադ. Պէյի. Թար. Եկնի. 18	
4 45	Եկնիմաստայէն Մէջադ. Պէյի. Թար. Եկնի. 33	
2 45	Եկնիմաստ. Մէջադ. Պէյի. Թար. Եկնի. Սթէն. 32	
3 45	Բ. Ս. Գալաթի. Մէջադ. Պէյի. Թար. Եկնի. 20	
4 30	Եկնիմաստ. Մէջադ. Պէյի. Թար. Եկնի. Սթէն. 34	
5 30	Եկնիմաստ. Մէջադ. Պէյի. Թար. Եկնի. Սթէն. 33	
6 45	Եկնիմաստայէն Պէյի. Թար. Եկնի. 4	
8	Բ. Ս. Գալաթի. Եկնիմաստ. Մէջադ. Պէյի. Թար. Եկնի. 49	
40 45	Մէջադ. Պէյի. Թար. Եկնի. 22	

ԱՅՆԱՅԻ ԳԵԼՆԷ

41	Արնամ. Գուր. Օրթա. Պէյի. 25
41 30	Արնամ. Գուր. Օրթա. Պէյի. 2
42	Պէյի. Արնամ. Գուր. Օրթա. Պէյի. 22
42 45	Արնամ. Գուր. Օրթա. Պէյի. 25
4 45	Արնամ. Գուր. Օրթա. Պէյի. 2
2	Արնամ. Գուր. Օրթա. Պէյի. 42
2 30	Պէյի. Արնամ. Օրթա. Պէյի. 25
3 30	Արնամ. Գուր. Օրթա. Պէյի. 48
8 30	Արնամ. Գուր. Օրթա. Պէյի. 2
40	Արնամ. Գուր. Օրթա. Պէյի. 12
40 45	Արնամ. Գուր. Օրթա. Պէյի. 2

ԱՅՆԱՅԻ ԵԼՆԷ

40 45	Պէյի. Գուր. Ա. Հիսար. Գանտ. Վանի. 12
41	Պէյի. Գուր. Գանտ. Վանի. 21
41	Արնամ. Վանի. 4
42	Պէյի. Գուր. Պէյի. 17
4 30	Պէյի. Գուր. Գանտ. Վանի. 49
3 45	Պէյի. Գուր. Գանտ. Վանի. 21

Լրագիրս ամեն օր կը հրատարակուի
բաց ի կերակի և տօն օրերէ:

Բաժանորդագրութեան տեղն է Գա-
լաթի Սանդղճըլար Զատուկի թիւ
193, Նոր խան Մասիսի խմբագրատու-
նը: Իսկ գաւառացի մէջ հետեւեալ հոգա-
բարձուաց գրասենեակները:

ԶՄԻՆՈՒՆԻԱ. Ստեփան Է. Տէրեւան.	
ՆԻԿՈՍԻՆԻԱ. Խոսրով » Խոսրովեան.	
ՊՐՈՒՍԱ. Ստեփան Է. Թանկեւան.	
ՌՈՏՈՍՈՒ. Արթ. Տ. Արիստակէս ա-	
ւագ. քահանայ ձեռնադր.	
ՍԱՐԻՍԱՆԻՊՈԼԻԱ. Սարգիս Է. Սարգիսեան.	
ՍԱՄՍՈՒՆ. Ս. Եթմէնեան Է. Փէնտի.	
ՍԵԲԱՍՏԻԱ. Նաղարէթ Է. Տ. Իս-	
թամպուկեան.	
ԵԻՊԻՆԻԱ. Քալաթի Է. Քալաթի.	
ԳԱՐԵԲԵՐԻ և ՏԵՐԵՍԻ. Կերակու Է. Ք.	
Ս. Գալաթի.	
ԵՐԶՆԻԱ. Թաղէս Է. Բաղրատուի.	
ԿՈՐԻՆ. Կարապետ » Զարարեան.	
ՄՈՒՇ. Մկրտիչ » Փօթիկեան.	
ՎԱՆ. Վ. Վ. » Խոսրովեան.	
ՏԻՐԱՆԱԿԵՐՈՒՆ. Թաղէս Է. Թաղ-	
էեան.	
ԵՐԵՍԻԱ. Գեորգ Է. Ոսկերչեան.	
ՄՈՐԱՆ. Մ. Մ. » Խոսրովեան.	
ՅՈՐԴՈՒՆ. Յիւրաղ աղա Ս. Յիւրաղա-	
ւան.	
ՏՓԻՆԻ. Պ. Նիկողայոս Տ. Գեորգեան.	
ԿԱՆԱԿԱՆ. Պարոտ աղա Է. Գեորգեան.	

45	Գանդա, Ա. Հիսար, Գանտ, Վանի, Պէյի. 22
7	Գուր. Գանտ, Վանի. 25
8 45	Պէյի. Գուր. Գանտ, Վանի. 25
	(Ուրախ օրերը իրարմէն փոխաւ մասնակցի):

ԿԱՄՈՒՐՁԷՆ ԵՆՈՂ ՇՈՐԵՆԱԿԵՐՈՒՆ

Ժամ	Երբեք ելնէ	Թիւ
12 45	Գապ. Իւսկ. Պէշիկ. Գուզկ. Օրթա. Պէյի. Ջէնկ. Սրնկ. Գանա. Ա. և Բ. Հիսար. Գանէ. Էմիրկէն, Ենէիք. Պէյթաթ. Թարապ. Պէյիւք. Ենէիման:	4
42 30	Պէշիկթ. Օրթա. Արնապ. Բ. Հիսար. Էմիրկ. Ենէիք. Թարապ. Պէյիւք. Ենէիման:	32
4 30	Պէշիկ. Օրթաթ. Արնապաւաւ. Բ. Հիսար Պոյաճ. Ենէիք. Թարապ. Պէյիւք. Մէզարապ. Բ. և Ա. Գապաթ :	20
2 30	Գանա. Պէշիկ. Օրթաթ. Գուր. Արնկ. Պէյիւք. Բ.Հիսար, Էմիրկ. Սթէն. Ենէիք: Թար. Պէյիւք. Մէզր. Ենէիմ:	34
3 45	Պէշիկթաւ . Օրթաթ. Արնապաւաւք, Բ, Հիսար, Էմիրկ. Ենէիք, Թարապ, Պէյիւք, Մէզարապ, Ենէիմ:	33
5	Պէշիկ . Օրթաթ . Արնապ . Պէյիւք Բ.Հիսար, Պոյաճ. Էմիրկ. Ենէիք. Պէյթաթ, Թարապ. Պէյիւք. Մէզարապ. Բ. և Ա. Գապաթ :	49
6 45	Իւսկ . Պէշիկ . Գուզկ . Օրթաթ . Պէյի . Ջէնկ . Արնապ. Գանա, Բ. Հիսար, Պոյաճ. Ենէիք. Թար. Պէյիւք:	25
8	Արնապ. Պէյիւք, Բ. Հիսար, Էմիրկ. Ենէիք. Թարապ . Պէյիւք. Իւզարապուրու :	22
9 45	Պէյիւք, Բ. Հիսար, Պոյաճ. Սթէն. Ենէիք. Թարապ. Պէյիւք. Թարապ. Պէյիւք. Մէզարապ. Ենէիման :	32
10	Բ. Հիսար, Էմիրկ. Ենէիք. Թարապ. Պէյիւք Մէզար. Ենէիման :	33
40 30	Օրթաթ. Արնապ. Պէյիւք, Բ. Հիսար, Էմիրկ. Սթէն. Ենէիք. Թարապ. Պէյիւք. Մէզարապ. Մէզարապ. Ենէիմ. (Ուրաթթ Երեւն Պէշիկթաւ, Գուրուէ):	48
40 45	Պէշիկ. Գուզկ. Գուր. Պէյիւք, Բ. Հիսար Պոյաճ. Էմիրկ. Ենէիք. Թար. Պէյիւք. Մէզ . Ենէիմ (Բաղի ուրաթթ)	34
44 15	Պէյիւք, Բ. Հիսար, Պոյաճ. Էմիրկ. Սթէն Ենէիքթայ, Թարապաւա, Պէյիւք. Մէզարապ. Մէզարապ. Ենէիմանապէ:	49

ԱՅՆԱՅԻ ԳԵԼՆԷ

12	Ուրախ Երբեք ելնէ: 25
12 30	» » 2
4 30	» » 42
2	» Պէյի. 25
3	» » 18
7 30	Պէյի. Գուր. Արնամ. 2
9 45	Գուր. Պէյի. Գուր. Արնամ. 12
10	Գուր. Պէյի. Գուր. Արնամ. 2
11 45	Գուր. Պէյի. Գուր. Արնամ. 25
14 40	Պէյի. Գուր. Օրթա. Արնամ. 2
12	Պէյի. Գուր. Օրթա. Արնամ. 22

ԱՅՆԱՅԻ ԵԼՆԷ

4 30	Գուր. Գանտ. Պէյի. Վանի. Գանտ. Ա. Հիսար. 21
3	Գուր. Գանտ. Պէյի. Վանի. Գանտ. Ա. Հիսար. 22
9	Գուր. Գանտ. Պէյի. Վանի. Գանտ. Ա. Հիսար. 20
9 45	Գուր. Գանտ. Պէյի. Վանի. Գանտ. Ա. Հիսար. 17
40 30	Գուր. Գանտ. Պէյի. Վանի. Գանտ. Ա. Հիսար. 21
41 45	Գուր. Գանտ. Պէյի. Վանի. Գանտ. Ա. Հիսար. 42
11 30	Գուր. Գանտ. Պէյի. Վանի. Գանտ. Ա. Հիսար. 5

ԻԻՍԿԻՏԱՐ ԲԱՆՈՂ ՇՈՐԵՆԱԿԵՐՈՒՆ

Ժամ	Երբեք ելնէ	Թիւ
41	6 15	41 30
41 30	7	41 45
12	8 45	42 45
42 30	8 35	42 45
4	9 45	4 45
4 25	9 35	4 40
2	10	2 45
2 30	10 25	2 45
2 55	10 45	3 40
3 30	14 5	3 45
4	14 25	4 15
4 30	41 40	4 40
5 5	42	5 45
5 45		6 40

ԿԻՐԱԿԻ ՕՐԷՆ

Ժամ	Երբեք ելնէ	Թիւ
41 30	5 25	11 30
42	6	12
42 30	6 35	42 30
4	8	4
4 30	8 40	4 30
2	9 20	2
2 30	10	2 30
3 5	10 30	3 5
3 45	11	3 45
4 30	11 30	4 30
5	12	5